ՀՀ Գեղարքունիքի մարզի Ճամբարակի համայնքապետարանը հայտարարում է մրցույթ՝ համայնքապետարանի աշխատակազմում համայնքային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար

Համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ /ծածկագիր՝ 2-3-4/

Աշխատակազմի գլխավոր մասնագետը՝

ա/ ունի բարձրագույն կրթություն, համայնքային կամ քաղաքացիական ծառայության պաշտոններում առնվազն երկու տարվա կամ վերջին երեք տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ կամ վերջին ութ տարվա ընթացքում համայնքի ավագանու անդամի աշխատանքային գործունեության առնվազն երկու տարվա փորձ կամ առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ:

բ/ <<Համայնքային ծառայության մասին>>, <<Տեղական ինքնակառավարման մասին>>, ՀՀ օրենքների, աշխատակազմի կանոնադրության և իր լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն,

գ/անհրաժեշտ տեղեկատվության տիրապետում,

դ/ համակարգչով և այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.

ե/տիրապետում է հայերենին /ազատ/ և մեկ այլ օտար /կարդում, կարողանում է բացատրվել/ լեզվի:

ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Աշխատակազմի գլխավոր մասնագետը՝

ա/ Ապահովում է կրթության, մշակույթի, սպորտի, երիտասարդության հետ տարվող աշխատանքները: Նպաստում է մշակութային կյանքի աշխուժացմանը, ազգային ծեսերի, տոների կազմակերպմանը, իրականացնում է պատմամշակութային արժեքների պահպանության ուսումնասիրություններ:

գ/ անմիջական աշխատանքային ու գործնական կապի մեջ է համայնքային ենթակայության կրթական, մշակութային հիմնարկությունների հետ /դպրոցներ,արվեստի,գեղարվեստի դպրոցներ, մարզադպրոցներ, մշակութային խմբակներ,սպորտային կազմակերպություններ և այլն/ օժանդակում է մրցումների, փառատոնների, մեծարման երեկոների կազմակերպմանը,առաջարկություններ է ներկայացնում աշխատակազմի քարտուղարին հիշյալ բնագավառների աշխատանքների բարելավման ուղղությամբ:

դ/ կատարում է իր կողմից սպասարկվող բնագավառի ուսումնասիրություններ

ե/ կատարում է աշխատակազմի քարտուղարի հանձնարարությունները՝

զ/ անհրաժեշտության դեպքում, մասնակցում է համապատասխան տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների կողմից կազմակերպվող քննարկումներին և այլ միջոցառումներին

է/ անհրաժեշտության դեպքում իր լիազորությունների սահմաններում նախապատրաստում է առաջարկությունների, տեղեկանքներ,հաշվետվություններ, միջնորդագրեր, զեկուցագրեր և այլ գրություններ
ը/ իրականացնում է քաղաքացիների դիմում-բողոքների սահմանված կարգով քննարկումը և արդյունքները ներկայացնում ժամանակին և պատշաճ որակով.
Աշխատակազմի գլխավոր մասնագետ ունի օրենքով, իրավական այլ ակտերով նախատեսված այլ իրավունքներ և կրում է այդ ակտերով նախատեսված այլ պարտականություններ:

Մրցույթը կանցկացվի 02.05.2019թ.՝ ժամը 12:00-ին, ՀՀ Գեղարքունիքի մարզի Ճամբարակի համայնքապետարանում / ք. Ճամբարակ, Գ. Նժդեհի 125/:

ԴԻՄՈՂ ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԸ ՊԵՏՔ Է ՆԵՐԿԱՅԱՑՆԵՆ ՀԵՏԵՎՅԱԼ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ՝

ա) գրավոր դիմում (տրվում է հանձնաժողովի անունով՝ նշելով այն պաշտոնը, որին հավակնում է դիմողը).
բ) համայնքային ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով այդ պաշտոնն զբաղեցնելու համար քաղաքացու մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետմանը ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի պատճենները.
գ) հայտարարություն այն մասին, որ ինքը չի տառապում Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 15-ի N 1801-ն որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված հիվանդություններից որևէ մեկով, որը հանրային ծառայության պաշտոնում նշանակվելու դեպքում կարող է խոչնդոտել ծառայողական պարտականությունների կատարմանն ու լիազորությունների իրականացմանը.
դ) հայտարարություն այն մասին, որ ինքը դատական կարգով չի ճանաչվել անգործունակ կամ սահմանափակ գործունակ.
ե) հայտարարություն համայնքային ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով պահանջվող օտար լեզվին (լեզուներին) տիրապետելու մասին.
զ) օրենքի 12 հոդվածի «ե» կետի պահանջը բավարարելու նպատակով արական սեռի անձինք ներկայացնում են նաև զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր և զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենները կամ համապատասխան տեղեկանք.
է) մեկ լուսանկար՝ 3X4 սմ չափսի.
ը) անձնագրի պատճենը:

ՀՀ քաղաքացին մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը հանձնում է անձամբ՝ ներկայացնելով անձնագիր:
Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր՝ ժամը 9.00-ից մինչև 18.00-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից, ՀՀ Գեղարքունիքի մարզի Ճամբարակի համայնքապետարանում / ք. Ճամբարակ, Գ. Նժդեհի 125 /և ՀՀ Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, մարզպետարանում / Գրիգոր Լուսավորչի 36/ :

Մրցույթների անցկացման վայրի, օրվա և ժամի հնարավոր փոփոխությունների մասին կհայտնվի լրացուցիչ՝ մրցույթից առնվազն մեկ շաբաթ առաջ:

ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐՋԻՆ ԺԱՄԿԵՏՆ Է՝ 17.04.2019թ.

Մրցույթին մասնակցել ցանկացող ՀՀ քաղաքացիները լրացուցիչ տեղեկություններ ստանալու, ինչպես նաև պաշտոնի անձնագրին և հարցաշարերին ծանոթանալու համար կարող են դիմել ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՃԱՄԲԱՐԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ/ք. Ճամբարակ, Գ. Նժդեհի 125, հեռ. 0265-2-22-55/ և ք. Գավառ, մարզպետարան: